«ՍԵՎԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ» ԵՎ ՆՐԱ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

XVII դարը հայ կերպարվեստի պատմության մեջ բնութագրվում է որպես բեկման շրջան։ Միջնադարյան արվեստի ավանդույթները աստիճանաբար կորցնում են իրենց ազդեցությունը՝ տեղի տալով նոր արվեստի նախանշաններին։ Տարբեր երկրներում անցման այդ երևույթը, ժամանակի ոգու և նրա դրսևորման ձևի առումով, կրել է ուրույն բնույթ՝ պայմանավորված ազգային յուրահատկություններով և պատմահասարակական միջավայրին բնորոշ հանգամանքներով։ Այդտեղ որոշակի դեր է ունեցել նաև արվեստի հին ավանդների նկատմամբ եղած հետաքրքրությունը։ Հայ իրականության մեջ հին սովորույթների կենսունակությունը XVII դարի արվեստին հաղորդեց առանձնահատուկ կերպարանք։ Ի տարբերություն եվրոպական երկրների, հայ իրականության մեջ այն ընթացավ «խաղաղ» վերափոխումների ձևով, առանց ոճական խիստ ներհակությունների։ Մինչդեռ Իտալիայում անցման այդ փաստը, թե՛ դաղափարական և թե՛ ոճի առումով, որակական խիստ հակընդդեմ իրադարձություն էր, որը «վերածնություն» դասական բնորոշումը ստացավ։ Ընդհանրապես, հայ բաղմադարյան մշակույթը իր զարգացման փուլերում (հին շրջան, հելլենիստական, միջնադար) միշտ պահպանել է իր ազգային ոճաձևաստեղծագիտական կերպարի ընդհանրությունը։ Փոխադարձ պայմանավորվածության ու աստիճանական զարգացման այդ երևույթը բնորոշ է նաև XVII դարի կերպարվեստին։

Հայ նոր արվեստի առաջնեկները՝ «Աստվածամոր յոթ վերքը», «Աստվածամայրը ննջած մանկան հետ», «Սևանի Աստվածամայրը», «Աստվածամոր թագադրումը» բովանդակությամբ և պատկերագրական մի շարք կողմերով դեռևս հարաբերվում են ուշ միջնադարյան արվեստի ձևերին։ Այդ գործերի գնահատության ստույգ տեղեկությունների բացակայության պարագայում, ժամանակի և տեղի ճշգրտման համար կարևոր նշանակություն է ձեռք բերում ինչպես ոճապատկերային վերլուծությունը, այնպես էլ պատմաբանասիրական նյութերի հանգամանալից քննությունը։ Ներկա հոդվածում այդ տեսանկյունով էլ փորձել ենք մոտենալ «Սևանի Աստվածամայրը» կտավին[1] *(նկ. 1)։*

Մեծարժեք այդ կտավը ցարդ չի ենթարկվել մասնագիտական հանգամանալից քննության։ Կտավի ցուցանակում այն համարվում է XVIII—XIX դդ. անհայտ հայ նկարչի գործ։

Արվեստաբան Ե. Մարտիկյանը այն վերագրում է Հակոբ (ավագ) Հովնաթանյանին (XVIII դար)՝ հիմք ընդունելով «Հակոբի նախորդ ստեղծագործություններում տեղ գտած Տիրամոր և Քրիստոսի նրա նախասիրած կերպարները, դեմքերը՝ մասնավորապես աչքերը նկարելու նրա եղանակը, զգեստների ծալքերի մշակման ձևը»[2]*։*

Խնդրո առարկա կտավը հիշատակում է նաև արվեստաբան Մ. Ղազարյանը։ Անդրադառնալով Հովնաթան Հովնաթանյանին վերագրվող աստվածամայրերին, նա նշել է, որ վերջիններիս համար «նախատիպ է հանդիսացել

---

1 *Հայաստանի պետական պատկերասրահ (Ж—3312/7257, կտ. յուղ., 78×58 սմ)։ Կտավը պատկերասրահին է հանձնել Մաշտոցի անվան Մատենադարանը, 1954 թ.։ 1959 թ. այն վերանորոգել է կուլտուրայի վաստակավոր գործիչ Վ. Բաղդասարյանը։*

2 *Ե. Մարտիկյան. Հայկական կերպարվեստի պատմություն, XVII—XIX դդ., Ա. Երևան, 1971, էջ 89—90, վերատպություն 4։*

Նկ. 1

նշանավոր «Սևանի Աստվածամայրը», որի գոյությունը հիշատակվում է դեռևս XVII դարի 2-րդ կեսում»[3]։ Մինչդեռ նույն գրքում[4], ինչպես նաև Հովնաթան Հովնաթանյան» հոդվածում[5] այդ աշխատանքը ներկայացված է որպես XVIII դարի գործ։

3 Մ. Ղազարյան. Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում. Երևան, 1974, էջ 195։

4 Նույն տեղում, էջ 16։

5 Մ. Ղազարյան. Հովնաթան Հովնաթանյան.—«Հայկական արվեստ», 1 (հին և միջին դարեր). Երևան, 1974, էջ 104։ Ցավոք, Մ. Ղազարյանը իր տեղեկությունների համար համապատասխան փաստարկներ չի բերել, որի հետևանքով էլ այդ կարծիքները մնացել են թեական։

Ռ. Դրամբյանը, չմասնավորելով իր խոսքը կտավի մասին, այն զետեղել է XVII—XVIII դդ. ստեղծված Աստվածամոր սրբապատկերների շարքում[6]։

Հայաստանի պետական պատկերասրահի կողմից հրատարակված «Հակոբ Հովնաթանյանը և նրա նախորդները» ցուցահանդեսի կատալոգում[7] «Սևանի Աստվածամայրը» կտավը ներկայացված է «Տիրամայրը մանկան հետ» անվան տակ որպես XVIII դարի գործ։

Ի մի բերելով տվյալ կտավի հետ կապված պատմաբանասիրական ողջ նյութը, փորձենք ճշտել նրա ստեղծման ժամանակի հարցը։

«Սևանի Աստվածամայրը» ըստ մի եղելության, առնչվում է հայ մշակույթի խոշորագույն երախտավորներից մեկի՝ Մխիթար Սեբաստացու (1676—1749) անվան հետ։ 1692 թ., տակավին 16-ամյա Մխիթարը, Կ. Պոլսից գալիս է Էջմիածին՝ միաբանելու։ Սակայն փոքր-ինչ հիասթափված, շուտով գնում է Սևան (ուր տառապում է աչքացավով) և շուրջ 10 օր այնտեղ մընալուց հետո վերադառնում է Բասեն[8]։ Մխիթար Սեբաստացու սևանյան այդ օրերի մասին Ղ. Ալիշանը գրել է. «Սեբաստացի սարկաւագն Մխիթար, յայնժամ 18 ամաց (պետք է լինի 16 ամաց—Ա. Ա.), եկեալ այսր յուխտ, յամի 1692, արժանաւորեցաւ հրաշալի տեսլեան և խոստման Տիրամօրն, օգնական լինելոյ աստուածասէր ըղձանացն, մինչ աղերս արկանէր առաջի պատկերի նորին, որ և ցարդ պահի անդ, թէ և հնացեալ և խանգարեալ, որոյ է օրինակս. և քաջալերեալ՝ յաջողեցաւ նորին Տիրամօր շնորհօք հաստատել զկրօնս իւր (1700), շինելով վանքս՝ նախ ի Մեթոն Մոռէայ, և ապա (1717) ի Վենետիկ...»[9]։

Բանասեր Ս. Շտիկյանը ևս վկայակոչում է այդ պատմության արդեն ավանդության վերածված տարբերակը. «Հայաստանից մեկընդմիշտ հեռանալուց առաջ Մխիթար Սեբաստացին Սևանա կղզում աղոթել է այդ պատկերի առաջ և նրանից խնդրել, որ իրեն ուժ ու զորություն տա հայագիտական կազմակերպություն հիմնելու համար։ Ըստ ավանդության, այդ ժամանակ շարժվել են Տիրամոր շուրթերը և Մխիթարը լսել է իր խնդրանքի պատասխանը՝ «Եղիցի»[10]։

Նախապատրաստվելով Մխիթարյան միաբանության երկուհարյուրամյա հոբելյանին, Ղ. Ալիշանը փորձում է հավաքել այն բոլոր մասունքները, որոնք առնչվել են Աբբահոր կյանքին։ Այդ նպատակով 1890—1900-ական թթ. նա մի շարք նամակներ է հղում Էջմիածնի միաբանության անդամներին (սկզբում Կ. Կոստանյանին, 1853—1920)՝ խնդրելով Սևանա կղզում գտնվող Աստվածամոր պատկերը, որի առջև աղոթել է իրենց ուխտի հիմնադիրը, նըմանատիպ գունանկարի կամ թե լուսանկարի ձևով ուղարկել իրեն[11]։ Ընդ

---

6 Р. Г. Дрампян. Искусство XVII—XVIII вв.—Очерки по истории армянского изобразительного искусства. Ереван, 1979, с. 112.

7 Երևան, 1969, կազմողներ՝ Մ. Այվազյան, Վ. Բաղդասարյան, Ս. Եղաշովա։

8 Տե՛ս Մ. Ագոնց. Պատմութիւն կենաց և վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ բարունապետի և աբբայի. Վենետիկ, 1810, էջ 48։ Ս. Ջալալյանց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. Բ, Թիֆլիս, 1858, էջ 110։ Ա. Ղազիկյան. Համառոտ վարք Մխիթարա Աբբահոր ոտանավոր. Վենետիկ, 1900, էջ 28 և այլն։

9 Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 88։ Տե՛ս նաև Հ. Թորոսյան. Վարք Մխիթարա Աբբայի Սեբաստացվո. Վենետիկ, 1901, էջ 72։

10 Գրական ժառանգություն, 5. Ղևոնդ Ալիշան. Նամակներ, տեքստեր, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Շտիկյանի. Երևան, 1969, էջ 238։ Ի դեպ, նույն էջում Ս. Շտիկյանը առանց աղբյուրը հղելու, սխալմամբ գրում է, թե կտավը Սևանա վանքին է հանձնել Գ. Այվազովսկին։

11 Ս. Շտիկյան. նշվ. աշխ., էջ 141։ Ալիշանը խնդրել էր նաև իրեն ուղարկել այդ կտավի մանրամասն նկարագրությունը, որը Մ. Սմբատյանը բարեխղճորեն կատարել է 1897 թ. (տե՛ս Հ. Թորոսյան. նշվ. աշխ., էջ 72)։

որում, Ղ. Ալիշանը հույս է ունեցել, որ ընդօրինակությունը կկատարի նկարիչ Վարդգես Սուրենյանցը[12]։ Սակայն ինչ-ինչ պատճառներով, հավանաբար կապված 1891 թ. էջմիածնից հեռանալու հանգամանքների հետ[13], մեծանուն նկարիչը չի կարողացել կատարել Ղ. Ալիշանի ցանկությունը[14]։

Այնուհետև, 1896—1901 թթ. միջոցին Ղ. Ալիշանը դարձյալ մի քանի նամակներ է հղում էջմիածին՝ այս անգամ Մ. Սմբատյանին (1833—1916)՝ նորոգելով «Սևանի Աստվածամայրը» կտավի գունանկարը ստանալու խնդրանքը[15]։ Ղ. Ալիշանին ուղղված պատասխան նամակից իմանում ենք, որ այդ կտավը Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ, որպես հին արվեստի լավագույն նմուշ, արդեն Սևանից տեղափոխվել է էջմիածին և միայն հնարավոր են համարել լուսանկարը ուղարկել Վենետիկ[16]։

Բոլոր դեպքերում շուրջ 15 տարի տևած բանակցություն-նամակագրությունները և Ղ. Ալիշանի հիմնական փափագը՝ իրենց մոտ ունենալ այդ կտավը, դրական լուծում չեն ստանում[17]։

1980 թ. որոշեցինք հարցում անել Վենետիկի Մխիթարյան միաբանությանը, իմանալու, թե ի՞նչ է հայտնի իրենց Ղ. Ալիշանի խնդրանքի հետագա ընթացքի մասին։ Պատասխանը անսպասելի էր ու հետաքրքիր։ Մեզ ուղարկվեց Մխիթարյան միաբանության թանգարանում պահվող (հար և նման Երևանի պատկերասրահի պատկերին) մի այլ «Սևանի Աստվածամոր» կտավի (75,7×55 սմ) գունավոր լուսանկարը (նկ. 2)։ Բարեբախտաբար, ուղարկվել էր նաև կտավի հակառակ կողմի մակագրությունը, ուր պարզ ընթերցվում է. «Սևանայ վանքից հեռացող Վենետկոյ Աբբահայր Մխիթարի խնդրակատար

---

12 Ս. Շտիկյան. նշվ. աշխ., էջ 143։ Վարդգես Սուրենյանցը Վենետիկում եղել է 1881 թ., մի որոշ ժամանակ ապրել է այնտեղ, սերտ բարեկամություն հաստատելով Ղ. Ալիշանի հետ (տե՛ս Մ. Ղազարյան. Վարդգես Սուրենյանց. Երևան, 1968, էջ 9—11)։

13 1890—1891 թթ. Վ. Սուրենյանցը նկարչության և ընդհանուր արվեստի պատմություն էր դասավանդում էջմիածնի Գևորգյան ճեմարանում։

14 Ի դեպ, Ս. Շտիկյանը շփոթմամբ գրում է, թե իբր Վ. Սուրենյանցը ընդօրինակել է «Սևանի Աստվածամայրը» և ուղարկել Վենետիկ։

15 Այդ նամակներից մի քանիսի պատճենը բարեհաճորեն մեզ է տրամադրել (1980 թ.) Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, տպարանի տնօրեն Կոմիտաս Մանուկյանը։

16 Բացի այս, Ն. Ակինյանի «Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա» (Վիեննա, 1912) գրքից տեղեկանում ենք, որ հայտնի բժիշկ-բնասեր Վ. Թորգոմյանը (1858—1942), գտնվելով էջմիածնում, ուր նա զբաղվել է ձեռագրերով, Վիեննա է ուղարկել «Սևանի Աստվածամոր» պատկերի լուսանկարը, որը և զետեղվել է Ն. Ակինյանի վերոհիշյալ գրքում (էջ 2)։ Տե՛ս նաև Հուշարձան դրական ժողովածո ստիպիվ 100-ամյա հոբելինի հաստատման Մխիթարյան միաբանության ի Վիեննա (1811—1911) և 25-ամյա տարեշրջանի «Հանդես ամսօրյա» ուսումնաթերթի (1887—1911). Վիեննա, 1911, էջ 2։

17 Ի դեպ, Ամենայն Հայոց կաթողիկոսը և էջմիածնի Գերագույն խորհուրդը մի պահ համաձայնում են, որ Մխիթարյան միաբանության 200-ամյակին նվիրված տոնահանդեսին մասնակցելու համար Վենետիկ մեկնող Մ. Սմբատյանն իր հետ վերցնի այդ կտավը (տե՛ս Հիշատակարան երկհարյուրամյա հոբելինի Մխիթարյան միաբանության ի Վենետիկ, 8 սեպտ. 1701—1901 սեպտ. 8, էջ ԼԶ։ Տե՛ս նաև Ս. Շտիկյան. նշվ. աշխ., էջ 195—196)։ Թվում էր, թե պիտի կատարվեր Մխիթարյան միաբանների իղձը։ Եվ մինչ Մխիթարյանները հուզմունքով սպասում էին Տիրամոր պատկերին, ստանում են պաշտոնական մի գրություն, որով կաթողիկոսի քարտուղար Կորյուն վարդապետը նրանց տեղեկացնում է, թե «Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետն... բարեհաճեցավ հղել զպատկերն ի վանսդ ընդ ձեռն դեսպանի Պետության Ռուսիո՝ որ ի Հռովմ, Պ. Նելիդոֆի և 19-ն ամսույս, սակայն ի ծրարելն պատկերին իսկությամբ անխախտ յուրով Հնոտի շրջանակավ և հղելն ի Սուրհանդակատունն Վաղարշապատ առաքել ի Վանսդ, ոչ ընկալավ ի կողմանե վարչության Սուրհանդակատանն հաղագս մեծադիր գոլոյն, և հետս վերադարձուցավ, զորմե Դիվանս հայտնե Արհիպատվության Ձերո ի գիտություն» (Հիշատակարան երկհարյուրամյա հոբելինի..., էջ ԼԷ)։

Տիրամոր. Հարազատ ընդօրինակութիւն պատկերհան Ենովք Հ. Նազարեանցի[18], յամի Տեառն 1903 ի Տփղիս»։

Այսպիսով պարզվում է, որ Խրիմյան Հայրիկը «Սևանի Աստվածամայրը» կտավը Վենետիկ ուղարկելու անհաջող փորձից հետո, Մխիթարյանների բաղձանքը ինչ-որ չափով կատարած լինելու համար, գեղանկարիչ Ե. Նազարյանցին հանձնարարում է ընդօրինակել հիշյալ կտավը և այն որպես նվեր ուղարկում է Վենետիկ[19]։ Այդ ամենը կատարվել է 1902—1903 թթ. ընթացքում։

Նկ. 2

Այսպես ուրեմն, բերված փաստերը պարզում են, որ «Սևանի Աստվածամայրը» կտավը 1692 թ. գտնվելիս է եղել Սևանա կղզու Ս. Աստվածածնի եկեղեցում։ Հետևաբար, ոչ մի հիմք չկա կտավը համարելու XVIII, առավել ևս՝ XIX դարի գործ։ Բայց կոնկրետ ե՞րբ է նկարվել։ Վերևում նշված արվեստաբաններից բացի, նկարի ստեղծման ժամանակի խնդիրը շոշափել է նաև Հ. Թորոսյանը իր «Վարք Մխիթարա Աբբայի Սեբաստացվո» գրքում։ Նա գրում է. «Այդ պատկերը երեք հարյուր տարվան հնություն ունի, ըստ վրկայության Վաղարշապատ բնակող պատկերահան Առաքել Սագինյանցի[20], ինչպես կգրե Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատյանցը»[21]։ Իսկ սա նշանակում է նկարի ստեղծումը տանել ընդհուպ XVII դարի սկիզբը։ Իսկ «Նոր դար» օրաթերթում կարդում ենք. «Աստվածածնի այդ օծյալ պատկերը, որքան մեզ հայտնի է, վեց հարյուր տարվա հնություն է (XIII դա՞ր—Ա. Ա.) և պաշտելի հնություն, որի առաջ սերունդները դալիս ծունր դնում, մոմ վառում, աղոթում և անցնում են»[22]։ Սա, անշուշտ, չափազանցություն է։ Ստորև կտեսնենք, որ նման սրբապատկերներ, թե՛ հորինվածքի և թե՛ ոճապատկերագրական առումով, XIII—XIV դդ. չէին կարող ստեղծվել։

Իր պատկերագրությամբ կտավը ներկայացնում է Աստվածամոր «չարչարանաց» մի տարբերակ, որը ձևավորվել է XV—XVI դդ. կեսերին, իտալա-

---

18 Պոլսահայ դիմանկարիչ Ե. Նազարյանցը (1868—1929) ապրել և ստեղծագործել է Թրիլիսիում ու Լենինականում։ Կտավի ձախ անկյունում Նույնպես կա հեղինակի ստորագրությունը՝ «Ենովք Հ. Նազարյանց», որը համապատասխանում է Հայաստանի պետական պատկերասրահում պահվող նրա վրձնած Հ. և Մ. Շալամյանների դիմանկարների ներքևում գտնվող ստորագրությանը։

19 Նկարակալի վրա կարդում ենք. «Նուեր Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսի Հայրիկ կոչեցելոյ»։

20 Ա. Սագինյանցը գեղանկարիչ էր (1844—1927), զբաղվել է սրբանկարչությամբ և մանկավարժությամբ (նկարչություն է դասավանդել Էջմիածնի Գեորգյան Ճեմարանում, Նոր Նախիջևանի և Ախալցխայի գայրոցներում)։

21 Հ. Թորոսյան. նշվ. աշխ., էջ 75 (տե՛ս ծան.)։

22 «Նոր դար», 25 հուլիսի 1901։

կան և հունական կերպարվեստների ոլորտում[23]։ «Զարշարանաց» տիպի իտալա-հունական դասական օրինակներից մի քանիսի մեջ հրեշտակները խաչափայտը և շարշարանքի գործիքները երկու կողմերից մոտեցնում են մանուկ Հիսուսին[24]։ Այդ պատկերներում մանուկը երկյուղած ավելի է ձգվում դեպի մայրը. մինչդեռ «Սևանի Աստվածամայրը» նկարում նա հանգիստ է, մտասույզ, ասես հաշտված իր երերական ճակատագրի հետ։

Հայաստանի պետական պատկերասրահում գտնվում են անհայտ հեղինակների «շարշարանաց» պատկերների մի քանի օրինակներ ևս (հավանաբար XVII—XVIII դդ.), ուր նույնպես խաչափայտը պատկերված է մանուկ Հիսուսի գրկում[25]։ Այդ օրինակները ցույց են տալիս, որ «շարշարանաց» տիպի պատկերագրության հետաքրքրական տարբերակներից մեկը, ըստ էության, տարածում է գտել Հայաստանում արդեն XVII դարում (եթե ոչ ավելի վաղ)։

«Սևանի Աստվածամայրը» սկզբունքորեն տարբերվում է պատկերագրության XV—XVI դդ. ընդունված դասական օրինակներից[26]։ Տպավորիչ ու զուսպ գունաշարը, զուգորդված թանձր կապույտի, դարչնավարդագույնի և սպիտակարծաթավունի թափանցիկ երանգավորումներին, դեմքերի հոգեբանական նուրբ բնութագրումների հետ զուսպ հուզականություն և ամբողջականություն է հաղորդում կերպարին։ Դրան է միտված նաև նկարի մակերեսի մշակումը, որտեղ փոքր-ինչ ծանր թվացող ձևերը իրենց նուրբ ուրվագծերով աննկատ ու թեթևորեն սահում են դեպի թանձր կապույտի լուսեղեն ֆոնը։ Այդտեղ նույնիսկ միջնադարից փոխառված սիմվոլիկ-խորհրդանշական մանրուքները՝ փշերը, աքցանն ու մուրճը, զառերը, արծաթե դրամները ընդհանուր լուծումով ասես չեն նկատվում, ետին պլան են մղվում՝ չխաթարելով պատկերի տիրական ու վեհասքանչ տպավորությունը։ Դա փաստորեն էպիկական-հուզական դիմանկարի առաջին օրինակներից մեկն է հայ կերպարվեստում, որը ձևավորվում է XVII դարի սկզբներին։ «Սևանի Աստվածամորը» և այդ խմբի մյուս կտավներին վիճակվեց լինելու երկու դարերի սահմանագծի մտքերի ու հույզերի արտահայտիչը։ Կարծում ենք, որ միանգամայն իրավացի է հին սրբանկարչության հմուտ վարպետ Ա. Սագինյանցը, որը նկարի ստեղծման ժամանակը համարում է XVII դարի սկիզբը։ Նշված ոճապատկերագրական և հուզաարտահայտչական տվյալները ևս իրենց հերթին շահեկանորեն նպաստում են այդ կտավի՝ XVII դարի գործ համարվելուն։

Այդ կերպարը միաժամանակ անհարիր չէր միջնադարյան հայ մանրանկարչության, հատկապես բանաստեղծության մեջ հանդիպող Աստվածամոր բնութագրումներին, նրա կերպարի հուզական ընկալմանն ու վերարտադրմանը.

Նման է մայր Քո արուսեկին,
և դու նման արեգական.
Նման է մայր Քո ամպոց ցողելոյ,
և դու նման ծիածանի՝ գոտոյն Նոյի.
Նման է մայր Քո աւուրց գարնանայնոյ
և դու նման ծաղկին համասպրական[27]։

---

23 Н. П. Кондаков. Иконография Богоматери (связи греческой и русской иконописи с итальянской живописью раннего Возрождения). Петербург, 1911, с. 144—179.

24 Նույն տեղում, էջ 141—145, նկ. 94, 95։

25 Նկատի ունենք հատկապես XVIII դարին վերագրվող «Տիրամայրը մանկան, Պողոս և Պետրոս առաքյալների հետ (Ж—4198/10182, կտ. յուղ., 100×85 սմ)։ Փոքր-ինչ այլ հորինվածք ունի XVIII—XIX դդ. վերագրվող «Աստվածամայրը մանկան, Հովհաննես Մկրտչի և Ս. Ստեփանոսի հետ» (Ж—4196/10180, կտ. յուղ., 85×65 սմ) կտավը։

26 Н. Кондаков. Указ. соч., с. 144—179.

27 Մ. Ավդալբեկյան. Խաչատուր Կեչառեցի. Երևան, 1958, էջ 192։

Պատահական չէր, որ այդ կտավի հանրային անմիջական տպավորությամբ Մխիթար Սեբաստացին ևս տասնյակ գողտրիկ տողեր է նվիրել Աստվածամորը.

Անճառին խորան,
Բանին բնակարան,
Գովեալ Մարիամ
Դու վարդ անթառամ.
Թագուհի երկնային
Ի քեզ պաղատիմ
Լույս տուր իմ ակին[28]։

«Գեղունի» ամսագրում այն միտքն է հայտնվել, որ Մխիթար Աբբահոր այդ ոտանավորները պատկանում են նրա նյանրդ այն շրջանին, երբ «կորսընցուցած լույսը իր մտքին, անառաջնորդ ու մոլորական կյանքի անել շավիղներուն մեջ, էջմիածինեն Սևան, Սևանեն Բասենի... կդիմե իր սրտի ապավենին, որ լուսաճաճանչ արևի պես... կբանա անմոլար ուղին»[29]։

Հարկ ենք համարում հիշատակել ևս երկու փաստ։ Առաջին. Վենետիկի Մխիթարյանները, հավանաբար 1940—1950-ական թթ., Ե. Նազարյանցի հայտնի ընդօրինակությունից, որը, ի դեպ, կախված է Աբբահոր սենյակի պատին, կատարել են մեկ այլ ընդօրինակություն և տեղավորել Ս. Ղազար եկեղեցու բեմի ճակատին։ Երկրորդ. Բուդապեշտի հայկական եկեղեցու թանգարանում պահվում է ասեղնագործ մի փոքրիկ վարագույր, կատարված 1950-ական թթ., որի վրա գունագեղ թելերով հյուսված է «Սևանի Աստվածամայրը», նեռքևում՝ ծունկի եկած Մխիթար Սեբաստացին։

«СЕВАНСКАЯ БОГОМАТЕРЬ» И ВРЕМЯ ЕЕ СОЗДАНИЯ

А. А. АРАКЕЛЯН

(Резюме)

Время создания и автор полотна «Севанская богоматерь» до сих пор вызывают споры среди искусствоведов: Е. Мартикян приписывает его Акопу Овнатаняну-старшему (XVIII в.), М. Казарян относит его ко второй половине XVII в., а Р. Дрампян датирует картину XVII—XVIII вв. Согласно письменным свидетельствам, видный деятель армянской культуры Мхитар Себастаци, будучи в 1692 г. в севанской церкви Сурб Аствацацин, видел исследуемое нами полотно. Надо полагать, что «Севанская богоматерь» была написана несколько раньше этого времени—в середине, а возможно и в первой половине XVII века. Авторство же картины по сей день остается невыясненным.

---

28 Հ. Ղ ր ա ս ս ո. Վեց տաղեր Մխիթար Սեբաստացիի հոգևոր երգարանեն ի պատիվ ամենասուրբ Կուսին Ի Ս. Անտոն անապատականի.—«Մխիթար Աբրահոր ծննդյան 300-ին առթիվ. 1676—1976». Վենետիկ, 1977, էջ 20։ Նման տողերի հանդիպում ենք նաև Սեբաստացու մի այլ երկում (Մ. Ս ե բ ա ս տ ա ց ի. Կրթութիւն աղօթից. Վենետիկ, 1772, էջ 262)։ Այս տողերը, հավանաբար, հորինվել են Սեբաստացու կյանքի սևանյան շրջանում՝ 1692 թ.։ Նույն շրջանի նրա հոգեկան տվայտանքներն են արտահայտում նաև «Երգ եւ աղերս առ ամենասրբուհի կոյսն», «Երանելի մայր անարատ Մարիամ լոյս» և մի շարք այլ տաղեր։

29 «Գեղունի». Վենետիկ, 1949, էջ 23—25։